

## II

*(Ակտեր, որոնց հրապարակումը պարտադիր չէ)*

**ԽՈՐՀՈՒՐԴ****ԽՈՐՀՐԴԻ 93/13/ԵՏՀ ՀՐԱՀԱՆԳ****1993 թվականի ապրիլի 5-ի  
սպառողական պայմանագրերում շարադրված  
անարդար պայմանների վերաբերյալ**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

նկատի ունենալով «Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին»  
պայմանագիրը եւ մասնավորապես՝ դրա հոդված 100 «Ա»-ն,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը <sup>(1)</sup>,

համագործակցելով Եվրոպական պառլամենտի հետ <sup>(2)</sup>,

հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական հարցերով կոմիտեի  
եզրակացությունը <sup>(3)</sup>,

հաշվի առնելով, որ անհրաժեշտ է ընդունել ներքին շուկայի՝ նախքան  
1992 թվականի դեկտեմբերի 31-ը աստիճանական ստեղծմանն ուղղված  
միջոցառումներ. հաշվի առնելով, որ ներքին շուկան առանց ներքին սահմանների  
տարածք է, որի ներսում իրականացվում է ապրանքների, անձանց,  
ծառայությունների եւ կապիտալի ազատ տեղաշարժ,

<sup>1</sup> ՊՏ թիվ C 73, 24.03.1992թ., էջ 7:

<sup>2</sup> ՊՏ թիվ C 326, 16.12.1991թ., էջ 108 եւ ՊՏ, թիվ C 21, 25.01.1993թ.:

<sup>3</sup> ՊՏ թիվ C 159, 17.06.1991թ., էջ 34:

հաշվի առնելով, որ անդամ պետությունների այն օրենքները, որոնք վերաբերում են մի կողմից՝ ապրանքներ վաճառողի կամ ծառայություններ մատուցողի, մյուս կողմից՝ դրանք սպառողի միջև կնքված պայմանագրի պայմաններին, ունեն բազմաթիվ անհամապատասխանություններ՝ հանգեցնելով սպառողներին ապրանքների եւ ծառայությունների վաճառքի ազգային շուկաների միջև տարբերությունների եւ վաճառողների ու ծառայություններ մատուցողների շրջանում մրցակցության խաթարման՝ հատկապես, երբ նրանք վաճառում եւ ծառայություններ են մատուցում այլ անդամ պետություններում,

հաշվի առնելով, որ մասնավորապես սպառողների հետ կնքված պայմանագրերում ներառված անարդար պայմանների վերաբերյալ անդամ պետությունների օրենքների միջև առկա են զգալի տարբերություններ,

հաշվի առնելով, որ անդամ պետությունների պարտականությունն է ապահովել, որ սպառողների հետ կնքված պայմանագրերը չպարունակեն անարդար պայմաններ,

հաշվի առնելով, որ ընդհանուր առմամբ սպառողները տեղյակ չեն օրենքի այն կանոններից, որոնք այլ անդամ պետություններում կարգավորում են ապրանքների կամ ծառայությունների վաճառքին վերաբերող պայմանագրերը.

հաշվի առնելով, որ իրազեկվածության այդպիսի բացակայությունը կարող է նրանց համար խոչընդոտ հանդիսանալ մեկ այլ անդամ պետությունում ապրանքների կամ ծառայությունների ձեռքբերման ուղղակի գործարքների համար,

հաշվի առնելով, որ ներքին շուկայի կայացումը հեշտացնելու եւ այլ անդամ պետությունների օրենքներին համապատասխան կարգավորվող պայմանագրերով ապրանքներ եւ ծառայություններ ձեռք բերելիս քաղաքացուն՝ որպես սպառողի պաշտպանված լինելն ապահովելու նպատակով անհրաժեշտ է այդ պայմանագրերից հանել անարդար պայմանները,

հաշվի առնելով, որ այդպիսով ապրանքներ վաճառողներին կամ ծառայություններ մատուցողներին կաջակցեն ինչպես իրենց պետության սահմաններում, այնպես էլ ամբողջ ներքին շուկայում ապրանքներ վաճառելու եւ

ծառայություններ մատուցելու իրենց գործում. հաշվի առնելով, որ այդպիսով կխթանվի մրցակցությունը՝ նպաստելով Համայնքների քաղաքացիների՝ որպես սպառողների ընտրության մեծացմանը,

հաշվի առնելով, որ սպառողի պաշտպանության եւ տեղեկատվական քաղաքականության վերաբերյալ Համայնքի երկու ծրագրերով <sup>(1)</sup> ընդգծվել են պայմանագրի անարդար պայմանների դեպքում սպառողներին պաշտպանելու կարելիությունը. հաշվի առնելով, որ այս պաշտպանությունը պետք է ապահովվի այն օրենքներով եւ կարգավորումներով, որոնք կա՛մ ներդաշնակեցվել են Համայնքի մակարդակում, կա՛մ անմիջականորեն ընդունվել են այդ մակարդակում,

հաշվի առնելով, որ «Սպառողների տնտեսական շահերի պաշտպանությունը» վերնագրի ներքո ամրագրված սկզբունքի համաձայն, ինչպես նշված է այդ ծրագրերում, «ապրանքներ եւ ծառայություններ ձեռք բերող անձինք պետք է պաշտպանված լինեն վաճառողի կամ ծառայություններ մատուցողի կողմից լիազորությունների չարաշահումից, մասնավորապես՝ միակողմանի օրինակելի պայմանագրերից եւ պայմանագրերում կարելի իրավունքների անարդարացի բացառման դեպքերից»,

հաշվի առնելով, որ սպառողի առավել արդյունավետ պաշտպանությանը կարելի է հասնել անարդար պայմանների դեպքում օրենքի միասնական կանոններ ընդունելու միջոցով. հաշվի առնելով, որ այդ կանոնները պետք է կիրառվեն վաճառողների կամ ծառայություններ մատուցողների եւ սպառողների միջեւ կնքված բոլոր պայմանագրերի նկատմամբ. հաշվի առնելով, որ արդյունքում, *inter alia* (ի թիվս այլնի), աշխատանքային պայմանագրերը, իրավահաջորդության իրավունքի հետ կապված պայմանագրերը, ընտանեկան օրենսդրությամբ նախատեսված իրավունքներին վերաբերող պայմանագրերը եւ ընկերությունների հիմնադրմանը եւ կազմակերպմանը վերաբերող պայմանագրերը կամ գործընկերության մասին համաձայնագրերը չպետք է դիտարկվեն սույն հրահանգի շրջանակներում,

<sup>1</sup> ՊՏ թիվ C 92, 25.04.1975թ., էջ 1 եւ ՊՏ թիվ C 133, 3.06.1981թ., էջ 1:

հաշվի առնելով, որ սպառողը պետք է հավասարապես պաշտպանված լինի ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր պայմանագրերի դեպքում, վերջին դեպքում՝ անկախ նրանից, թե արդյոք պայմանագրի պայմանները ներառված են մեկ կամ մի քանի փաստաթղթերում,

հաշվի առնելով, որ, այնուամենայնիվ, ազգային օրենսդրություններով ներկայումս թույլատրվում է միայն մասնակի ներդաշնակեցում. հաշվի առնելով, որ սույն հրահանգով կարգավորվում են մասնավորապես միայն պայմանագրի այն պայմանները, որոնց շուրջ առանձին բանակցություններ չեն տարվել. հաշվի առնելով, որ անդամ պետությունները, պատշաճ կերպով հաշվի առնելով Պայմանագիրը, պետք է սպառողներին ներկայացնեն պաշտպանության ավելի բարձր մակարդակ այն ներպետական դրույթների միջոցով, որոնք ավելի խիստ են, քան սույն հրահանգի դրույթները,

հաշվի առնելով, որ անդամ պետությունների օրենսդրական կամ կարգավորող դրույթները, որոնցով ուղղակի կամ անուղղակի կերպով որոշվում են սպառողական պայմանագրի պայմանները, ենթադրաբար չեն պարունակում անարդար պայմաններ. ուստի հաշվի առնելով, որ անհրաժեշտ չէ անդրադառնալ այնպիսի պայմանների, որոնք արտացոլում են պարտադիր օրենսդրական կամ կարգավորող դրույթներ եւ միջազգային այն կոնվենցիաների սկզբունքները կամ դրույթները, որոնց կողմ են հանդիսանում անդամ պետությունները կամ Համայնքը. հաշվի առնելով, որ այդ առումով 1-ին հոդվածի 2-րդ մասում շարադրված «պարտադիր օրենսդրական կամ կարգավորող դրույթներ» ձեւակերպումը նույնպես ներառում է այնպիսի կանոններ, որոնք, համաձայն օրենքի, կիրառվում են պայմանագրի կողմերի միջեւ՝ պայմանով, որ որեւէ այլ համաձայնություն ձեռք չի բերվել,

հաշվի առնելով, որ անդամ պետությունները պետք է, այնուամենայնիվ, ապահովեն անարդար պայմանների բացառումը, քանի որ մասնավորապես սույն հրահանգը նույնպես կիրառվում է հանրային բնույթի առետրային, ձեռնարկատիրական կամ մասնագիտական գործունեության նկատմամբ,

հաշվի առնելով, որ անհրաժեշտ է ընդհանուր կերպով ամրագրել պայմանագրի պայմանների անարդարացի լինելը գնահատելու չափորոշիչները,

հաշվի առնելով, որ ըստ ընտրված ընդհանուր չափորոշիչի՝ պայմանների անարդարացի լինելու գնահատումը, մասնավորապես՝ վաճառքի կամ հանրային բնույթի ծառայությունների մատուցման գործունեության մասով, որի շրջանակներում մատուցվում են օգտվողների միջև միանման պայմաններով հավաքական ծառայություններ, պետք է լրացվի ներառված տարբեր շահերի ընդհանուր գնահատականը տալու միջոցով. հաշվի առնելով, որ սա ենթադրում է բարեխղճության պահանջի ներառում. հաշվի առնելով, որ բարեխղճությունը գնահատելիս առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել կողմերի բանակցային դիրքորոշումներին՝ արդյոք սպառողն ունեցել է պայմանին համաձայնելու շարժառիթ, եւ արդյոք ապրանքները կամ ծառայությունները վաճառվել կամ մատուցվել են սպառողի հատուկ պատվերով. հաշվի առնելով, որ բարեխղճության պահանջը կարող է բավարարվել վաճառողի կամ ծառայություն մատուցողի կողմից այն դեպքում, երբ նա ազնվորեն եւ արդարացիորեն է վարվում մյուս կողմի հետ, որի օրինական շահերը պետք է հաշվի առնվեն,

քանի որ, սույն հրահանգի նպատակներով հավելվածի տեսքով կից ներկայացված պայմանների ցանկը կարող է դիտարկվել պարզապես որպես օրինակելի նմուշ, եւ քանի որ Հրահանգով սահմանվում են նվազագույն պայմանները, սույն պայմանների շրջանակն անդամ պետությունների կողմից իրենց ազգային օրենսդրություններում կարող է ընդլայնվել կամ ենթարկվել ավելի խիստ խմբագրման,

հաշվի առնելով, որ ապրանքների տեսակը կամ ծառայությունների բնույթը պետք է ազդեցություն ունենա պայմանագրի պայմանների անարդարացի լինելը գնահատելու վրա,

քանի որ սույն հրահանգի նպատակներով անարդարացի լինելու գնահատումը չի արվում պայմանագրի հիմնական առարկան ներկայացնող պայմանների կամ

մատակարարվող ապրանքների կամ ծառայությունների որակ/գին հարաբերակցության հիման վրա. հաշվի առնելով, որ պայմանագրի հիմնական առարկան եւ որակ/գին հարաբերակցությունը, այնուամենայնիվ, կարող են հաշվի առնվել այլ պայմանների արդարացիությունը գնահատելիս. քանի որ ասվածից կարելի է հետեւություն անել, որ, *inter alia*, ապահովագրական պայմանագրերով այն պայմանները, որոնց համապատասխան հստակորեն սահմանվում կամ սահմանափակվում է ապահովագրված ռիսկը եւ ապահովագրողի պատասխանատվությունը, ենթակա չեն այդպիսի գնահատման, քանի որ այդ սահմանափակումները հաշվի են առնվում հաճախորդի կողմից վճարվող ապահովագրական վճարը հաշվարկելիս,

հաշվի առնելով, որ պայմանագրերը պետք է կազմվեն պարզ, հասկանալի լեզվով, սպառողին իրականում պետք է տրվի բոլոր պայմաններն ուսումնասիրելու հնարավորություն, եւ տարընթերցման դեպքում պետք է որպես հիմք ընդունվի սպառողի համար առավել բարենպաստ մեկնաբանությունը,

հաշվի առնելով, որ անդամ պետությունները պետք է ապահովեն, որ վաճառողի կամ ծառայություններ մատուցողների կողմից սպառողների հետ կնքված պայմանագրերում չներառվեն անարդարացի պայմաններ, եւ եթե, այնուամենայնիվ, ներառվում են այդպիսի պայմաններ, ապա դրանք սպառողի համար չեն կրի պարտավորեցնող բնույթ, իսկ պայմանագրով այդ պայմանները կողմերի համար կշարունակեն պարտադիր ուժ ունենալ, եթե հնարավոր լինի չդադարեցնել պայմանագիրն առանց անարդարացի դրույթների,

հաշվի առնելով, որ կա ռիսկ, որ որոշակի դեպքերում սպառողը կարող է զրկվել սույն հրահանգով նախատեսված պաշտպանությունից, եթե պայմանագրի նկատմամբ կիրառելի իրավունք է ընտրված անդամ չհանդիսացող պետության իրավունքը. հաշվի առնելով, որ սույն հրահանգում հետեւաբար պետք է ներառվեն այդ ռիսկի վերացմանն ուղղված դրույթներ,

հաշվի առնելով, որ ֆիզիկական անձինք կամ կազմակերպությունները, եթե անդամ պետության օրենսդրության համաձայն համարվում են տվյալ դեպքում օրինական շահ ունեցող անձինք, պետք է ունենան սպառողների հետ կնքված պայմանագրերում պայմանագրի ընդհանուր պայմանների, մասնավորապես՝ անարդար պայմանների մասով վարույթ հարուցելու հնարավորություն կա՛մ դատարանում, կա՛մ բողոքների վերաբերյալ որոշումներ ընդունելու կամ համապատասխան իրավական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող վարչական մարմնի առջև. հաշվի առնելով, որ այս հնարավորությունը, այնուամենայնիվ, չի ենթադրում տնտեսության առանձին հատվածներում ընդհանուր պայմանների նախնական ստուգում,

հաշվի առնելով, որ անդամ պետությունների դատարանները կամ վարչական մարմինները պետք է սպառողական պայմանագրերում ներառված անարդար պայմանների շարունակական կիրառումը կանխելու նպատակով տիրապետեն համապատասխան եւ արդյունավետ միջոցների,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

### *Հոդված 1*

1. Սույն հրահանգի նպատակն է մոտարկել անդամ պետությունների օրենքները, կանոնակարգերը եւ վարչական ակտերը, որոնք վերաբերում են վաճառողի կամ ծառայություններ մատուցողի եւ սպառողի միջեւ կնքված պայմանագրերում նշված անարդար պայմաններին:
2. Պայմանագրի այն պայմանները, որոնք արտացոլում են պարտադիր օրենսդրական կամ կարգավորող դրույթները եւ միջազգային այն կոնվենցիաների դրույթները կամ սկզբունքները, որոնց կողմ են հանդիսանում անդամ պետությունները կամ Համայնքը, մասնավորապես՝ տրանսպորտի բնագավառում, չեն կարգավորվում սույն հրահանգի դրույթներով:

### Հոդված 2

Սույն հրահանգի նպատակներով՝

- ա) **անարդար պայմաններ** նշանակում է 3-րդ հոդվածում սահմանված պայմանագրի պայմանները.
- բ) **սպառող** նշանակում է ֆիզիկական անձ, որը սույն հրահանգով կարգավորվող պայմանագրերում գործում է այն նպատակներով, որոնք չեն բխում իր առետրային, ձեռնարկատիրական կամ մասնագիտական գործունեությունից.
- գ) **վաճառող կամ ծառայություններ մատուցող** նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը սույն հրահանգով նախատեսված պայմանագրերով հանդես է գալիս իր առետրային, ձեռնարկատիրական կամ մասնագիտական գործունեությանը վերաբերող նպատակներով՝ անկախ սեփականության հանրային կամ մասնավոր ձեւից:

### Հոդված 3

1. Պայմանագրի այն պայմանը, որի շուրջ առանձին բանակցություններ չեն տարվել, համարվում է անարդար, եթե բարեխղճության պահանջին հակառակ՝ այն զգալի անհավասարակշռություն է առաջացնում կողմերի՝ տվյալ պայմանագրից բխող իրավունքների եւ պարտավորությունների միջեւ՝ ի վնաս սպառողի:
2. Համարվում է, որ պայմանի շուրջ առանձին բանակցություններ չեն տարվել, եթե պայմանը մշակվել է նախապես, եւ հետեւաբար սպառողը չի կարողացել ազդեցություն ունենալ պայմանի էության վրա, մասնավորապես՝ նախապես ձեւակերպված օրինակելի պայմանագրի համատեքստում:

Այն փաստը, որ որեւէ պայմանի կամ մեկ կոնկրետ պայմանի որոշակի ասպեկտներ առանձին կերպով քննարկվել են, չի բացառում սույն հոդվածի կիրառումը պայմանագրի մնացած մասի նկատմամբ, եթե պայմանագրի



ընդհանուր գնահատումը ցույց է տալիս, որ այն, այնուամենայնիվ, նախապես ձեւակերպված օրինակելի պայմանագիր է:

Եթե որեւէ վաճառող կամ ծառայություններ մատուցող պնդում է, որ առանձին կերպով բանակցություններ են տարվել պայմանագրի որեւէ ստանդարտ պայմանի շուրջ, ապա այդ մասով ապացուցման բեռը դրվում է նրա վրա:

3. Հավելվածը պարունակում է այն պայմանների կողմնորոշիչ եւ ոչ սպառիչ ցանկը, որոնք կարող են անարդար համարվել:

#### Հոդված 4

1. Զխախտելով 7-րդ հոդվածը՝ պայմանագրի պայմանի անարդարացիությունը գնահատվում է՝ հաշվի առնելով այն ապրանքների կամ ծառայությունների բնույթը, որոնց համար կնքվել է պայմանագիրը, եւ պայմանագիրը կնքելիս վկայակոչելով պայմանագրի կնքմանն առնչվող բոլոր հանգամանքները եւ պայմանագրի մյուս բոլոր պայմանները կամ մեկ այլ պայմանագրի պայմանները, որին այն կապակցված է:
2. Պայմանների անարդարացի լինելու գնահատումը չի վերաբերում մի կողմից՝ ո՛չ պայմանագրի հիմնական առարկայի սահմանմանը, ո՛չ գնի եւ վարձատրության համապատասխանությանը, եւ մյուս կողմից՝ ծառայությունների կամ ապրանքների մատակարարումներին այնքանով, որքանով այս պայմանները շարադրված են պարզ եւ հասկանալի լեզվով:

#### Հոդված 5

Այն պայմանագրերի դեպքում, երբ սպառողին առաջարկված բոլոր կամ որոշ պայմաններ գրավոր են, ապա այդ պայմանները պետք է բոլոր դեպքերում ձեւակերպվեն պարզ, հասկանալի լեզվով: Եթե որեւէ պայմանի նշանակության վերաբերյալ կասկածներ կան, ապա գերակայում է սպառողի համար առավել

բարենպաստ մեկնաբանությունը: Մեկնաբանման վերաբերյալ սույն կանոնը չի կիրառվում 7-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված ընթացակարգերի համատեքստում:

### Հոդված 6

1. Անդամ պետությունները սահմանում են, որ վաճառողի կամ ծառայություններ մատուցողի կողմից սպառողի հետ կնքված պայմանագրում ներառված անարդար պայմանները, իրենց ազգային օրենսդրությանը համապատասխան, պարտադիր ուժ չունեն սպառողի համար, եւ որ պայմանագրի այդ պայմանները շարունակում են գործել կողմերի համար, եթե հնարավոր լինի շարունակել դրանց գործողությունն առանց անարդար պայմանների:
2. Անդամ պետությունները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ սպառողը չզրկվի սույն հրահանգով նախատեսված պաշտպանությունից, եթե պայմանագրի նկատմամբ որպես կիրառելի իրավունք է ընտրվում անդամ չհանդիսացող պետության իրավունքն այն դեպքում, երբ այդ պայմանագիրը սերտորեն կապված է անդամ պետությունների տարածքի հետ:

### Հոդված 7

1. Անդամ պետությունները, սպառողների եւ մրցակիցների շահերից ելնելով, պետք է ապահովեն համապատասխան եւ արդյունավետ միջոցներ՝ վաճառողների կամ ծառայություններ մատուցողների կողմից սպառողների հետ կնքված պայմանագրերում անարդար պայմանների ներառումը կանխելու նպատակով:

2. Առաջին մասում նշված միջոցները ներառում են այնպիսի դրույթներ, ըստ որոնց՝ սպառողներին պաշտպանելու հետ կապված ազգային օրենսդրության համաձայն օրինական շահեր ունեցող անձինք կամ կազմակերպությունները կարող են, համապատասխան ազգային օրենսդրության համաձայն, միջոցներ ձեռնարկել դատարաններում կամ իրավասու վարչական մարմիններում՝ որոշելու համար՝ արդյոք պայմանագրի ընդհանուր կիրառման պայմաններն անարդար են, թե ոչ, որպեսզի նրանք կարողանան կիրառել համապատասխան եւ արդյունավետ միջոցներ այդպիսի պայմանների ներառումը կանխելու համար:
3. Պատշաճ կերպով հաշվի առնելով ազգային օրենքները՝ 2-րդ մասում վկայակոչված իրավական պաշտպանության միջոցները կարող են առանձին կամ համատեղ ուղղված լինել միեւնոյն տնտեսական ոլորտի մի շարք վաճառողների կամ ծառայություն մատուցողների կամ նրանց ասոցիացիաների դեմ, որոնք օգտագործում կամ խորհուրդ են տալիս օգտագործել պայմանագրային միեւնոյն ընդհանուր պայմաններ կամ համանման պայմաններ:

### *Հոդված 8*

Անդամ պետությունները կարող են սույն հրահանգով կարգավորվող ոլորտում ընդունել կամ ուժի մեջ թողնել Պայմանագրի հետ համատեղելի առավել խիստ դրույթներ՝ սպառողների պաշտպանության առավելագույն մակարդակ ապահովելու համար:

### *Հոդված 9*

Հանձնաժողովը սույն հրահանգի կիրառման վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում Եվրոպական պառլամենտ եւ Խորհուրդ՝ 10-րդ հոդվածի 1-ին մասում նշված ամսաթվից ամենաուշը հինգ տարի հետո:

### Հոդված 10

1. Անդամ պետություններն ուժի մեջ են մտցնում սույն հրահանգի համապատասխանեցման համար անհրաժեշտ իրավական ակտեր, կանոնակարգեր եւ վարչական ակտեր ոչ ուշ, քան 1994 թվականի դեկտեմբերի 31-ը: Նրանք այդ մասին անհապաղ տեղեկացնում են Հանձնաժողովին:

Սույն դրույթները կիրառվում են այն պայմանագրերի նկատմամբ, որոնք կնքվել են 1994 թվականի դեկտեմբերի 31-ից հետո:

2. Անդամ պետությունների կողմից նշված ակտերն ընդունելու դեպքում դրանք պետք է հղում պարունակեն սույն հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Այդպիսի հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

3. Անդամ պետությունները պետք է Հանձնաժողով ներկայացնեն ազգային իրավունքի այն հիմնական դրույթները, որոնք իրենց կողմից ընդունվում են սույն հրահանգով կարգավորվող ոլորտում:

### Հոդված 11

Սույն հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Լյուքսեմբուրգում 1993 թվականի ապրիլի 5-ին:

*Խորհրդի կողմից՝*

*Նախագահ*

Ն. ՀԵԼՎԵԳ ՓԻԹԵՐՍԵՆ

**ՀԱՎԵԼՎԱԾ****3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍՈՒՄ ՆՇՎԱԾ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ****1. Պայմաններ, որոնք ունեն հետեւյալ նպատակը կամ ազդեցությունը՝**

- ա) վաճառողի կամ ծառայություններ մատուցողի իրավական պատասխանատվության բացառում կամ սահմանափակում սպառողի մահվան կամ վերջինիս այդ վաճառողի կամ ծառայություններ մատուցողի արարքի կամ անգործության հետեւանքով անձնական վնաս հասցնելու դեպքում,
- բ) վաճառողի կամ ծառայություններ մատուցողի կամ մեկ այլ կողմի նկատմամբ սպառողի օրինական իրավունքների ոչ պատշաճ կերպով բացառում կամ սահմանափակում վաճառողի կամ ծառայություններ մատուցողի կողմից պայմանագրային պարտավորություններից որեւէ մեկի ամբողջական կամ մասնակի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում, ներառյալ՝ վաճառողի կամ ծառայություններ մատուցողի նկատմամբ ունեցած պարտքը սպառողի որեւէ պահանջի դիմաց հաշվանցելու տարբերակը,
- գ) պայմանագիրը պարտադիր դարձնելը սպառողի համար, մինչդեռ վաճառողի կամ ծառայություններ մատուցողի կողմից ծառայությունների մատուցումը պայմանավորված լինի մի պայմանով, որի իրականացումը կախված է միայն նրա սեփական կամքից,
- դ) թույլ տալ վաճառողին կամ ծառայություններ մատուցողին պահել սպառողի կողմից վճարված գումարներն առանց համարժեք գումարի փոխհատուցման այն դեպքում, երբ վերջինս որոշում է չկնքել պայմանագիրը կամ չկատարել դրա պայմանները, կամ եթե պայմանագիրը չեղյալ է հայտարարվել վերջինս նախաձեռնությամբ,

- ե) իր պարտավորությունը չկատարող սպառողից որպես փոխհատուցում անհամեմատ բարձր գումարի վճարում պահանջելը,
- զ) լիազորել վաճառողին կամ ծառայություններ մատուցողին ըստ հայեցողության լուծել պայմանագիրը , եթե նույն հնարավորությունը չի տրամադրվում սպառողին, կամ թույլատրել վաճառողին կամ ծառայություններ մատուցողին պահել իր կողմից դեռևս չմատուցված ծառայությունների դիմաց վճարված գումարները, եթե տվյալ վաճառողը կամ ծառայություններ մատուցողն ինքն է լուծել պայմանագիրը,
- է) հնարավորություն տալ վաճառողին կամ մատակարարին անորոշ ժամկետով դադարեցնել պայմանագիրն առանց ողջամիտ ծանուցման՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրա համար կան լուրջ հիմքեր,
- ը) սպառողի կողմից այլ բան չնշելու դեպքում որոշակի ժամկետով պայմանագրի գործողության ավտոմատ կերպով երկարաձգում, երբ սպառողի համար սահմանվում է պայմանագիրը չերկարաձգելու ցանկություն հայտնելու համար անհիմն վաղ վերջնաժամկետ,
- թ) սպառողի համար այն պայմանները պարտադիր դարձնելը, որոնց ծանոթանալու համար նա չի ունեցել իրական հնարավորություն նախքան պայմանագիր կնքելը,
- ժ) հնարավորություն տալ վաճառողին կամ ծառայություններ մատուցողին միակողմանիորեն փոփոխելու պայմանագրի պայմանները՝ առանց պայմանագրում նշված հիմնավոր պատճառի,
- ժա) հնարավորություն տալ վաճառողին կամ մատակարարին միակողմանիորեն փոփոխելու մատակարարման ենթակա արտադրանքի կամ ծառայության հատկանիշները՝ առանց հիմնավոր պատճառի,
- ժբ) նախատեսել, որ ապրանքների գինը որոշվի առաքման պահին, կամ թույլ տալ ապրանքներ վաճառողին կամ ծառայություններ մատուցողին բարձրացնել դրանց գինը՝ երկու դեպքում էլ սպառողին չտրամադրելով

պայմանագիրը չեղյալ հայտարարելու համապատասխան իրավունք, եթե վերջնական գինը չափազանց բարձր է պայմանագրի կնքման պահին համաձայնեցված գնի համեմատ,

- ժգ) վաճառողին կամ ծառայություններ մատուցողին հնարավորություն տալ որոշելու, թե արդյոք մատակարարված ապրանքները կամ մատուցված ծառայությունները համապատասխանում են պայմանագրին, կամ նրան տալ պայմանագրի ցանկացած պայման մեկնաբանելու բացառիկ իրավունքը,
- ժդ) սահմանափակել իր գործակալների կողմից ստանձնած պարտավորությունները՝ հարգելու վաճառողի կամ ծառայություններ մատուցողի պարտավորությունը, կամ իր ստանձնած պարտավորությունները պայմանավորել որոշակի ձեականությամբ,
- ժե) սպառողին պարտավորեցնել կատարելու իր բոլոր պարտականությունները, եթե վաճառողը կամ ծառայություններ մատուցողը չի կատարում իր պարտականությունները,
- ժզ) վաճառողին կամ ծառայություններ մատուցողին տալ պայմանագրով նախատեսված իր իրավունքներն ու պարտականությունները փոխանցելու հնարավորություն այն դեպքում, երբ դա կարող է սպառողի համար առաջացնել երաշխիքների նվազեցում՝ առանց վերջինիս համաձայնության,
- ժէ) բացառել կամ խոչընդոտել սպառողի՝ դատական գործ հարուցելու կամ իրավական պաշտպանության որեւէ այլ միջոց կիրառելու իրավունքը՝ մասնավորապես պահանջելով սպառողից վեճերը ներկայացնել բացառապես իրավական դրույթներով չնախատեսված արբիտրաժի կարգավորմանը, իրեն հասանելի ապացույցներն անհարկի սահմանափակելով կամ նրա վրա ապացուցման բեռ դնելով, որը, համաձայն կիրառելի օրենսդրության, պետք է դրվի պայմանագրի մյուս կողմի վրա:

## 2. է), ժ) եւ ժբ) ենթակետերի գործողության շրջանակը

- ա) Ենթակետ «է»-ն չի խոչընդոտում այն պայմանները, որոնցով ֆինանսական ծառայություններ մատուցողն իրավունք է վերապահում անորոշ ժամկետով միակողմանիորեն լուծելու պայմանագիրը՝ հարգելի պատճառի դեպքում այդ մասին չճանուցելով՝ պայմանով, որ ծառայություններ մատուցողից պահանջվում է պայմանագրի մյուս կողմին կամ կողմերին անմիջապես հայտնել այդ մասին:
- բ) Ենթակետ «ժ»-ն չի խոչընդոտում այն պայմանները, որոնց համաձայն ֆինանսական ծառայություններ մատուցողն իրավունք է վերապահում փոփոխելու սպառողի կողմից կամ նրա հետ կապված վճարման ենթակա տոկոսադրույքը կամ ֆինանսական ծառայությունների մասով այլ վճարների գումարները՝ հարգելի պատճառի դեպքում այդ մասին չճանուցելով՝ պայմանով, որ ծառայություններ մատուցողից պահանջվում է պայմանագրի մյուս կողմին կամ կողմերին առաջին իսկ հնարավորության դեպքում հայտնել այդ մասին, եւ որ վերջիններս կարող են անհապաղ լուծել պայմանագիրը:

Ենթակետ «ժ»-ն նաեւ չի խոչընդոտում այն պայմանները, որոնց համաձայն՝ վաճառողը կամ ծառայություններ մատուցողն իրավունք է վերապահում անորոշ ժամկետով միակողմանիորեն լուծելու պայմանագիրը՝ պայմանով, որ նա պետք է սպառողին այդ մասին հայտնի ողջամիտ ժամկետում արված ճանուցման միջոցով եւ պայմանով, որ սպառողը կարող է լուծել պայմանագիրը:

- գ) Ենթակետեր «է»-ն, «ժ»-ն եւ «ժբ»-ն չեն կիրառվում՝
- փոխանցելի արժեթղթերի, ֆինանսական փաստաթղթերի եւ այլ ապրանքների կամ ծառայությունների հետ կապված գործարքների նկատմամբ, որտեղ գինը կապված է ֆոնդային բորսայի գնանշումների կամ ինդեքսի կամ ֆինանսական շուկայի փոխարժեքի տատանումների հետ, որոնք չեն վերահսկվում վաճառողի կամ ծառայություններ մատուցողի կողմից,



- արտարժույթի առուվաճառքի պայմանագրերի, ճամփորդական չեկերի կամ արտարժույթով արտահայտված միջազգային դրամական վճարման կարգադրագրերի նկատմամբ:
- դ) Ենթակետ «Ժբ»-ն չի հակասում գների ինդեքսավորման դրույթներին, եթե դա թույլատրված է օրենքով՝ պայմանով, որ այն մեթոդը, որի համաձայն փոփոխվում են գները, հստակ նկարագրված լինի:
-